



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտերջագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

ստանձնել և տարածել նյութը ցանկացած մեդիայով կամ կրիչով
մեափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԶՈՒՅԵՐԱ-ՀԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ

(ՊՕՂՈՍԵԱՆ)

ԵՐԿՈՒ ՍԵՌԷ ՀԱՅ ՏՂՈՑ ՀԱՄԱՐ

Wine for Spring
ՍԿԻՒՏԱՐ, ԻՃԱՏԻՑԷ

ՀԻՄՆԱԳԻՐ-ՑՆՕՐԷՆ


ՎԵՐ. ԳՐ. Ս. ՊՕՂՈՍԵԱՆ



Կ. ՊՈԼԻՄ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՁՈՒՄԱՆ

1921



ԶՈՒՒՑԵՐԱ-ՀԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ

(ՊՕՂՈՍԵԱՆ)


ԵՐԿՈՒ ՍԵՈՒՔ ՀԱՅ ՏՂՈՑ ՀԱՄԱՐ

ՍԿԻՏԱՐ, ԻՃԱՏԻՅԷ *հուսկընդհատ*

պայմանագրով և այլոցը փոխարենում 5 մարտի 1921

ՀԻՄՆԱԳԻՐ-ՑՆՕՐԷՆ

ՎԵՐ. ԳՐ. Ս. ՊՕՂՈՍԵԱՆ



Կ. ՊՈՒԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՁՈՒՄԱՆ

1921

ՎԱՐՉԱԿԱՆ ԷՒ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԿԱԶՄ

ՕՐ. ԿԱՏԱՐԻՆԷՆԷ ՍԹՈՒՅԻ — Խնամակալուհի
ՎԵՐ. ԴՐ. Ս. ՊՕՂՈՍԵԱՆ — (B. A. B. D. Lic. ès Sc. Morales)
ՏԵՐԿԸ

ՏԻԿ. Ս. Դ. ՊՕՂՈՍԵԱՆ — Մանկապարտեզի վարիչ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ

ՎԵՐ. ԴՐ. Ս. ՊՕՂՈՍԵԱՆ

ՏԻԿ. Ս. Դ. ՊՕՂՈՍԵԱՆ

ՕՐ. ՀՆԼԷՆ ՊԱՌԻՄԿԱՐԹ

ՕՐ. ԱՆԹՈՆԻՍ ԵՍԵՆԵԱՆ

ՏԻԿ. ՍԻՐԱՆՈՒՇ ՀԳՆԱՒՈՐԾԱՆ

ՕՐ. ՆԱՐԿԻՍ ՀԱՄՐԱՐՉՈՒՄԵԱՆ

ՊՐՆ. ՌԱՐՍԵՂ ԿՐԱՆՈՍԵԱՆ

ՊՐՆ. ՀՄԱՅՆԱՆ ԶԱՐԳԱՐԾԱՆ



ԶՈՒՑԵՐԱ-ՀԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ

(ՊՕՂՈՍԵԱՆ)

ԵՐԿՈՒ ՍԵՌԷ ՀԱՅ ՏՂՈՅ ՀԱՄԱՐ

ՈՒՂՂՈՒԹԻՒՆ ԵՒ ՆՊԱՏԱԿ

Զուիցերա-Հայ Վարժարանը պէսքէ մը ծնունդ առած է եւ ան իր բոլոր ուժերով ու միջոցներով կը ծառի զոհացում տալ այդ պէսքին: Դաստիարակուած անձերու, տաշուած նկարագիրներու, աննկուն կամբերու պէսքն է ան, զոր այնքան զգալի եղած է մեր մէջ մանաւանդ վերջին տարիներու ընթացքին: Վարժարանս մասնաւորաբար նկատի ունենալով մեծ կարիքը՝ մանկավարժական լուրջ մեթոտներով կրօնական եւ բարոյական հիմերու վրայ դրուած դաստիարակութեան՝ ուշադիր պիտի հետեւի ամէն մէկ աշակերտի ստեղծագործ ուժերուն, անհատական յարաբերութիւն մշակելով անոնց հետ եւ կարելի եղած չափով յարմարագոյն միջավայրը ստեղծելով անոնց թարուն ընդունակութիւնները ծաղկեցնելու, անոնց սրտին ու հոգիին խորունկ տնչերուն զիտակից ընելու համար զանոնք: Ուղղամիտ, պարտաճանաչ, ազգասէր, ընկերասէր ու բարեպաշտ անձեր կ'ուզենք հասցնել: Գիտակից մարդեր պատրաստել է՝ — դպրոցիս առաջադրած նպատակը — մարդեր որոնք զիտակցութիւնը ունենան իրենց ու իրենց ազգին բարձրագոյն կոչումին:

ԱԶԳԱՅԻՆ Ո՞ՒՆ

Տոհմային դաստիարակութիւնը պիտի ըլլայ մին այն զլխաւոր նպատակներէն զոր պիտի հետապնդենք անվնենք,

եւ այդ պիտի ընենք արեւմտեան քաղաքակրթութեան կեղծ շարժումը եղծանուած հայ նկարագրի պատուական յատկանիշները ի լոյս բերելու՝ մեր նորահաս սերունդին մէջ՝ որ ամէն օր աւելի ենթակայ է դժբաղդաբար օտար ազդեցութեան վատթար ու նուաստացուցիչ կողմերուն։ Առ այդ վարժարանս Վարանիր յայտարարելու թէ իր տրամադրելի բոլոր միջոցներով պիտի մաքառի այն բոլոր ազդեցութիւններուն դէմ որոնք մեր մատաղատի մանուկները վատասերումի եւ ապազգայնացումի կ'առաջնորդեն։ Մասնաւորապէս պիտի մաքառինք գաղափարի այն հոսանքներուն դէմ որոնք խորշակի մը նման կը փչեն Արեւմուտքէն Արեւելք եւ կը սպառնան չորցնել ակը մեր ազգային կենսունակ ուժերուն, եւ կը խաթարեն նկարագիրները մեր հրիտասարդներուն։ Այս եղած է անկեղծ փափաքը անոր որ իր կեանքի լաւագոյն 24 տարիները մեր որբերը խնամելու նուիրելէ յետոյ, այժմ մեզ տրամադրած է Դպրոցիս բացումը կարելի ընող մեծ զուժարը։ Հայ ցաւին անբաժան մէկ բարեկամը եղած է ան եւ հիացողը հայ կենսունակ ուժերուն։ Զուիցերա-Հայ վարժարանը տոգորուն իր խնամակալուհիին, Սր. Կասաբինե Արուիի վեհաշունչ գաղափարներով եւ ազնիւ զգացումներով վառ պիտի պահէ հայ ոգին, հայ լեզուն, հայ պատմութիւնը իր սեմերէն ներս մտնող ամէն մէկ աշակերտի մէջ՝ անոնցմով կերտելու համար վերստին հայ նկարագիրը։

ԿՐՕՆԱԿԱՆ ԴՈՐԲԸ

Աորապէս համոզուած ըլլալով Քրիստոնէական կրօնի բարոյացուցիչ եւ սրբացուցիչ դերին եւ զայն նկատելով ներդաշնակ դաստիարակութեան անհրաժեշտ մէկ պայմանը, դպրոցս՝ առանց յարանուանական ուրեւ ձգումի՝ իրեն յանձնուած մանուկներուն անվերապահօրէն ցոյց պիտի տայ ակը նեկտարին, որ կեանք տուաւ մեր ցեղին ընտրելագոյն տարրին։ Անոնց պիտի մատնանշէ գաղափարականը զոր ա-

նոնք հետապնդեցին: Պիտի ներշնչուիւնք Աւետարանի անգերազանցելի սկզբունքներովը, եւ մեր աշակերտները պիտի առաջնորդենք Յիսուս Քրիստոսի զոր Փէսթալոցցի սովոր էր «Եզական ուսուցիչ»ը կոչել, եւ զոր նորահաս մանկավարժներ չեն վարանած «Դաստիարակներու տիպար»ը դաւանելու: Այս է նաեւ մեր դաւանանքը:

ԳԻՇԵՐՈՅԻԿՆԵՐ

Չուիցերա-Հայ Վարժարանը կը պատրաստէ նաեւ գիշերօթիկ մանչերու յարկաբաժին մը, ուր ամէն ջանք պիտի թափուի անոնց համար ընտանեկան յարկի տարուկ մթնոլորտ մը ստեղծելու:

Գիշերօթիկներ պիտի գտնուին Չուիցերա-Հայ Վարժարանիս տնօրէնին շարունակական հսկողութեան տակ եւ պիտի վայլեն հոգաձուլիւնը երկու Չուիցերուհիներու — Օր. Կատարինէ Սթուրիի - Վարժարանիս խնամակալուհիին — եւ Օր. Հէյլէն Պաուսկարթի:

Հոգ պիտի տարուի աշակերտներու ֆիզիքական առողջութեան ու մաքրութեան ինչպէս նաեւ անոնց մտաւոր ու բարոյական զարգացումին:

ՄԱՆԿԱՊԱՐՏԷՉ

Մանկապարտէզին համար հարկ եղած Ֆոէօպէլեան եւ Մօնթէսօրի խաղերը եւ առարկաները իր հետ բերած է Տիկ. Ս. Գ. Պօղօսեան — մանկապարտէզի վարիչը — որ Չուիցերիա չէն նոր վերադարձաւ: Մեզի յանձնուած մանուկները պիտի կրթենք ժամանակակից ամէնէն յաջող մանկապարտէզներու ինչպէս ժընէվի՝ Maison des Petits, Mlle Brandt, եւ այլնի մեթոտներով: Պատիկներու երգի, մարզանքի եւ խաղի դասերուն պիտի ընկերանայ երգէտնը: Անոնք պիտի ունենան իրենց փոքրիկ պարտէզները եւ այլն:

ԵՐԳԻ դասերուն մէջ մասնաւոր ուշադրութիւն պիտի ընենք որ աշակերտներ չէ թէ միայն երգե՛ր, այլ նամանաւանդ երգել սորվին եւրոպական նօթագրութեամբ :

Չափաւոր զիններով դաշնակի դասեր ալ պիտի տրուին :

Մ Ո Ւ Տ Ք Ի Պ Ա Յ Մ Ա Ն Ն Ե Ր Ը

Գ Ի Շ Ե Ր Ք Ի Կ Ն Ե Ր Ո Ւ Լ Ա Մ Ա Ր

1. Դպրոցական տարեշրջանին վճարումն է 300 Օ. Ո, այն աշակերտներու համար որոնք Մնունդի եւ Չատկի արծակուրդներն ալ մեր քով կ'անցնեն. 280 Օ. Ո. անոնց համար որոնք կը մեկնին այդ արծակուրդներուն :

2. Դիշերօթիկները պէտք է իրենց հետ բերեն մահճակալ, անկողին, փոխնորդ ճերմակեղէն եւ այլն եւ այլն :

Ց Ե Ր Ե Կ Ե Ա Յ Ա Շ Ա Կ Ե Ր Տ Ն Ե Ր Ո Ւ Լ Ա Մ Ա Ր

Մանկապարտեզ. —	36 Օ. Ո.
Նախակրթարան. —	42 եւ 45
Բարձրագոյն. —	50 Օ. Ո.

Տարեթոշակներու կէսը Սեպտեմբերին եւ մնացեալը Մնունդի արծակուրդէն յետոյ՝ Երկրորդ շրջանի սկիզբը կը պահանջուի :

Դ Ա Ս Ը Ն Թ Ա Յ Ք

Ջ ՈՒ Ի Ց Ե Ր Ա - Շ Ա Յ Վ Ա Ր Ժ Ա Ր Ա Ն Ի

Կ Ր Յ Ն

Թ. ԿԱՐԳ. — Ս. Գրքէն պատմութիւններ: Պզտիկ գոցեր:

Ը. ԿԱՐԳ. — Ստեղծագործութենէն մինչև Իտալիոյ Քանան մուտքը:

Է. ԿՐԳ. Բանան մուտքէն մինչև թագաւորութեան բաժանումը:

Զ. ԿԱՐԳ. — Թագաւորութեան բաժանումէն մինչև զերութենէ դարձ:

Ե. ԿԱՐԳ. — Մարգարէներ:

Դ. ԿԱՐԳ. — Յիսուսի կեանքը:

Գ. ԿԱՐԳ. — Եկեղեցիին հաստատումը եւ Պողոսի թուղթերը:

Բ. ԿԱՐԳ. — Հայ եկեղ. Պատմութիւն — Եկեղեցական պատմութենէն էջեր:

Ա. ԿԱՐԳ. — Քրիստոնէական կրօնը եւ ուրիշ կրօններ:

Հ Ա Յ Ե Ր Է Ն

Թ. ԿԱՐԳ. — Ընթերցանութիւն — Բառագիտութիւն — Ուղղագրութիւն — Շարադրութեան փորձեր:

Ը. ԿԱՐԳ. — Ընթերցանութիւն — Բառագիտութիւն — Զրուցագրութիւն — Շարադրութիւն — Քերականութիւն:

Է. ԿԱՐԳ. — Ընթերցանութիւն Զրուցագրութիւն — Բառագիտութիւն — Շարադրութիւն — Քերականութիւն:

Չ. ԿԱՐԳ. Նախորդ տարիին շարունակութիւնը — Քերականական լուծում:

Ե. ԿԱՐԳ. — Ընթերցանութիւն — Շարադրութիւն — Լուծում — Եւն.:

Դ. ԿԱՐԳ. — Գրաբար Քերականութիւն — Օտար լեզուէ հայերէնի թարգմանութիւն — Գրաբարէ թարգմանութիւն:

Գ. ԿԱՐԳ. — Եղիշէ Լուծում:

Բ. ԿԱՐԳ. — Գրագիտութիւն:

Ա. ԿԱՐԳ. — Մատենագրութիւն:

Ա Ն Գ Լ Ե Ր Է Ն

Ք. ԿԱՐԳ Կարդալու նախախործեր — Բառագիտութիւն — Հնչումի մասնաւոր ուշադրութիւն:

Ը. ԿԱՐԳ. Ընթերցանութիւն — Քարգմանութիւն, *The New Royal Reader* — I.

Է. ԿԱՐԳ. — Քարգմանութիւն — Քերականական ծանօթութիւններ (քերանացի) *The New Royal Reader* II.

Չ. ԿԱՐԳ. — Քարգմանութիւն — Քերականութիւն — *The New Royal Reader* — Շարադրութիւն:

Ե. ԿԱՐԳ. — Ընթերցանութիւն — Բառակազմութիւն — Ընդօրինակութիւն Քերականութիւն Եւն., *The New Royal Reader* III.

Դ. ԿԱՐԳ. — Նախորդ տարիին շարունակութիւնը — *The New Royal Reader* IV.

Գ. ԿԱՐԳ. Ընտրուած էջեր Անգլիական Գրականութեան նամակագրութիւն — Շարադրութիւն — Քարգմանութիւն օտար լեզուներէ:

Բ. ԿԱՐԳ. Անգլիական Գրականութիւն — Վաճառականական թղթակցութիւն:

ՅՐԱՆՍԵՐԷՆ

Է. ԿԱՐԳ. — Ընթերցանութիւն — Նախադասութիւն կազմել Բառագիտութիւն:

Զ. ԿԱՐԳ. Lectures primaires: E. Toutey.

Ե. ԿԱՐԳ. Lectures primaires premier degré du cours élémentaire — Grammaire.

Գ. ԿԱՐԳ. — Lectures primaires du cours moyen.

Բ. ԿԱՐԳ. — Ֆրանսական Գրականութենէն ընտրուած էջեր եւ Գրականութեան պատմութիւնը:

Անգլերէնի համար եղած վարժութիւններուն բոլորն ալ տեղի կունենան նաեւ ֆրանսերէնի համար:

Թ Ո Ւ Ր Ք Ե Ր Է Ն


Թուրքերենի ուսուցումը կը սկսի եօթներորդ տարիէն եւ կը շարունակուի մինչեւ երկրորդ կարգի դասընթացքի վերջը: Իրր դասագիրք պիտի գործածուի

یکی قرائت کتابی و تورك ديليك صرف و نحو

եւ լեզուին դերանալու համար հարկ եղած ընթերցանութեան, թարգմանութեան, քերականութեան, աղերսագիր, մուրհակներ գրելու վարժութիւններ եւլն. եւլն. պիտի ընկերանան դասագրքերուն:

Ո Ւ Ս Ո Ղ, Ո Ւ Թ Ի Ի Ն

Թ. ԿԱՐԳ. — Նախնական ծանօթութիւններ թիւերու վրայ — Համրելի — Գրելի — Գրաւոր եւ մտաւոր վարժութիւններ — Առօրեայ կեանքի մէջ գործածուած դրամներու եւ չափե-



2017
927

բու մասին ծանօթութիւն—100-1000 Հանում, Գումարում, Բազմապատկութիւն, Աղիւսակ եւ գոնէ 500 խնդիրի լուծում:

Ը. ԿԱՐԳ. — Քաղուած նախորդ տարիին — ամբողջական թիւերու բաժանումը — Մինչեւ միլիոնաւոր թիւեր գրել — Գործնական խնդիրներ չորս գործողութեանց վրայ (Հասարակ բաժանարար) եւ ըն Մէթրական դրութիւն:

Է. ԿԱՐԳ. — Կոտորակներ - Հասարակ եւ մեծագոյն բաժանարար գտնել—Կոտորակներու չորս գործողութիւնները — Վարժութիւններ բաղադրեալ թիւերու վրայ եւ այլն:

Զ ԿԱՐԳ — Տասնորդական կոտորակ—Տոկոս, Կամեմատութիւն Ծահ եւ կորուստ:

Ե. ԿԱՐԳ.—Խառն խնդիրներ թուարանական գործողութեանց վրայ—Տարրական ծանօթութիւններ երկրաչափութեան վրայ— Քառակուսի եւ խորանարդ արմատ:

Դ. ԿԱՐԳ. — Գրահաշիւ:

Գ. ԿԱՐԳ. — Գրահաշիւ — Երկրաչափութիւն:

Բ. ԿԱՐԳ. — Երկրաչափութիւն:

Ա. ԿԱՐԳ. — Տոմարակալութիւն:

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

Թ. ԿԱՐԳ. — Հայ Ազգ. կարեւոր դէմքեր:

Ը. ԿԱՐԳ. — Միջազգային դէմքեր:

Է. ԿԱՐԳ. — Միջազգային դէմքեր:

Զ. ԿԱՐԳ. — Հայոց պատմութիւն:

Ե. ԿԱՐԳ. — Հայոց պատմութիւն, Օսմ. Պատմ.:

Դ. ԿԱՐԳ. — Արեւելեան ազգեր եւ Յունաց պատմ.:

Գ. ԿԱՐԳ. — Հռովմայեցւոց:

Բ. ԿԱՐԳ. — Էջեր միջազգային պատմութեանէն մինչեւ բարեկարգութ.:

Ա. ԿԱՐԳ. — Մինչեւ մեր օրերը:

Գ Ի Տ ՈՒ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Թ. ԿԱՐԳ. — Իրագիտութիւնը Մարդկային մարմինը — Առանին առարկաներ ժամանակի բաժանումներ — Կենդանիներ :

Ը. ԿԱՐԳ. — Իրաւագիտութիւն - Առարկաներու — Բնագիտական յատկանիշները: Բ. Շրջան տեղական աշխարհագրութիւն:

Է. ԿԱՐԳ. — Աշխարհագրութիւն տարրական գիտելիք — Քարտէս գծել:

Զ. ԿԱՐԳ. — Աշխարհագրութիւն - Փոքր Ասիա եւլն. — Քարտէս գծել:

Ե. ԿԱՐԳ. — Աշխարհագրութիւն — Առողջապահութիւն — Մարդակազմութիւն:

Դ. ԿԱՐԳ — Նախագիտելիք բնական աշխարհագրութեան Մարդակազմութիւն:

Գ. ԿԱՐԳ. — Բնական աշխարհագրութիւն - Բուսարնթ. :

Բ. ԿԱՐԳ — Բնագիտութիւն - Կենդանաբանութիւն:

Ա. ԿԱՐԳ. — Հոգեբանական նախնական գիտելիք Մանկավարժութիւն - Բարոյագիտութիւն:

∴

Ամէն կարգ առանց բացառութեան ունի շարաթական որոշեալ ժամերու Երգի, Գծագրութեան, Գեղագրութեան եւ Մարզանքի դասեր: Աղջիկները ունին նաեւ ձեռագործի եւ ճիւսելու դասեր:

